

Հ ԱՆՈՒՅՈՒՄ
ՀՍՍՌ ԳԱ ԽՈՀԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆՔ Դ (Armeniaca)¹

22. Մ Ա Լ Ա Հ Ի

Հայկական Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Վ. Դուլքանյանը հարցրեց ինձ, թե ինչ ծագում ունի մալաղի բառը, որով հասկանում են այժմ Երևանում և նրա շրջակայքում մի տեսակ խաղող և նրանից պատրաստված սքանչելի քաղցրահամ գինին։

Այս բառը ինձ ծանոթ է մալաղի ձևով և ոչ թե մալաղի։ Գավառական բառարանում (էջ 742—3) գտնում ենք մալաղի կամ մալաղեկ (Վանի բարբառով) «սքանչելի քաղցրահամ տանձ, որ կախան են անում», մեղադ կամ միլադ (Վանի բարբառով) «կիսահաս պտուղների կապոց, որ կախան են անում»։

Երկուսի մեջ էլ հիմնական իմաստն է «կախել, կախան անել»։

Riggs, անգլիացի կամ ամերիկացի բողոքական քարոզիչ Զմիռնիայում, հրատարակել է 1847 թվին մի բառարան, որի խորագիրն է «A vocabulary of words used in modern armenian, but not found in the ancient armenian lexicons»։ Այս գրքում, էջ 93, իբրև ուսմիկ բառ հիշված է մալաղի խաղողի կեմալ «կախված մնալ, ընկնելու վտանգի մեջ լինել»։

Միջին հայերենում էլ գործածված է այս բառը մալաղ ձևով, ինչպես գտնում ենք Հայսմաուրթում (մարտի 18)։ «Երեք երկինք հաւասարեալ ի շուրջ գան և պատեն գաշխարհաւ՝ ի վեր և ի վայր մաղալի (տրպված է մաղալաղ) առեալ և իւրեանց շրջագայութեամբն գերկիրս ի կայր պահեն»։

Այս բոլորը միևնույն են և ծագում են արաբ. *mu'allaq* բառից, որ նշանակում է «կախեալ, առկախ»։ Գիտական առած է *kurru-i arḡ mu'allaq* «երկրագունդը առկախ է»։ Նույն բառը նշանակում է նաև «գլխավայր շրջվել, գլուխկոնծի տալ» և այս իմաստով Պարսկաստանում դարձել է *maylay*։ այս ձևից է նաև միջ. հյ. մաղաղ, Նույնից է դարձյալ վրաց. *მაღაღი* մալաղի «գլուխկոնծի» (տես նաև Արմ. Բառ., հտ. Դ, էջ 771)։

23. Չ Ի Ր

Մինջանի բառարանում, որ հրատարակեց իմ հանգուցյալ զասընկեր R. Gauthiot (MSL, հտ. 19, 1916 թ.), էջ 145 գտնում եմ չիր՝ «ծիրան» բառը, որի հետ հեղինակը համեմատում է նաև եփղափ բարբառով չեր և ֆաֆիր բարբառով *tsirah*։ (այս բոլորը խոսում են Հինգուղու թարձուկների մասին)։

¹ Տես՝ «Տեղեկագիր» № 3—4, 1945 թ.

քում), Հեղինակը չգիտի այս բառերի ծագումը. միայն հիշում է թե Մսնչի Ծայրգ-Բախը գրում է այս բառը cheri ձևով. ապա հարցնում է թե արդյոք Հնդկաստանի լեզուներից փոխ առնված մի բառ չէ՞:

Ակնհերև կերպով մինջանի չիրի, երդդահի չերի և քաֆիրի ցիրառ թերան» նույն են մեր չիր բառի հետ:

Ո՞ր լեզուն փոխ է առել այս բառը մյուսից. հայերենը Հինդուքուշից, թե՛ Հինդուքուշի այս բարբառները հայերենից:

Հայերեն չիր բառի ծագումը հայտնի է. նա իբրև ձայնդարձ միանում է հյ. չոր բառի հետ, որի ծագումը հնդկարոպական է. առաջանում է հնի. k'soros ձևից. հմմտ. սանս. kṣara, հուն. ξερός «չոր», Հյ. չիր՝ թեև առաջանում է չոր բառից և ըստ այսմ բուն նշանակում է ամեն մի չոր պտուղ, բայց հատկապես ծիրանի չորը: Մյուս պտուղների չորը բարդությամբ է կազմվում. ինչ. տանձաչիր, շլորաչիր:

Կարո՞ղ էր Հայաստանի չիրը մինչև Հինդուքուշ հասնել:

Ըստ բուսաբանների ծիրանը Հայաստանի բնիկ պտուղներից է. այնպես որ գիտական անունն է Prunus armeniaca = հայկական սալոր. լատիներեն կոչվում է armeniicum և իտալերեն armellino. իսկ արաբ. توفلج-ال-ارمني, որ նշանակում է հայկական խնձոր:

Չիր բառը փոխ է առնված թրք. Շիր ձևով, որ նշանակում է «չորացրած ծիրան կամ սալոր», և վրաց. ჩივი չիրի ձևով, որ նշանակում է ընդհանրապես «չորացրած պտուղ». օր. լեղվիս չիրի «չոր թուզ»:

Այս հանգամանքների տակ հասկանալի է դառնում, որ չիրը մինչև Հինդուքուշ հասած լինի. բայց չիրը և ոչ թե ծիրանը:

24. Մ Ա Թ Ո Ւ Ջ

Մաթուզը կիսավայրենի մի պտուղ է, որ աճում է մաքրի կամ մաքրեցի կոչված ծառի վրա: Լատիներեն կոչվում է arbutus, ծանոթ է Պոլսում թրք. hoja yemiği «պառավի պտուղ» անունով: Հնից ավանդված է միայն մաքրի (ծառը) Վստկ. 155. իսկ այժմ բարբառներում ունենք՝ Զեյթուն մաքուզ, Սվեդիա մաթիս (matos) պտուղը և Զեյթուն մաքրի, Սվեդիա mal'sina ծառը:

Այս բառի ծագման մասին ոչ ոք ոչ մի կարծիք չի հայտնել:

Գարծում եմ որ մաքուզ արդյունք է արագարանության (haplologie) և ձևացած է աղամաքուզ բառից:

Արդի բառարաններում աղամաքուզ բառով նշանակված է banane կոչված պտուղը, որ հայտնի է նաև արաբ. մոզ անունով: Բայց ավելի ճիշտ է figue-banane պտուղը, որ պարսկերեն կոչվում է آفانج anjir-i Adam և անճիրիտամ ձևով հիշատակված է Ամիրտովաթի մոտ: Բառացի թարգմանվում է «Ադամի թուզ», ինչպես նշանակում է նաև Դէորգ Դպիրը իր Պարսկերեն բառարանում (տպ. Պոլիս 1826), էջ 87ա՝ «Ադամայ թուզ» ձևով: Իբր թե նախամայր Եվայի կերած և Ադամին էլ մատուցած պտուղը հենց այս էր: Ուրիշներ Ադամի կերած պտուղը շատ բամբարակ ձևով են բացատրում, որի աղբյուրը անշուշտ պրս. آفانج anjir «թուզ» բառի երկրորդ նշանակութունն է, որ և հատուկ բառով կոչվում է آفانج anjira:

Որպեսզի մաքուզ բառը առաջացած լինի աղամաքուզ բառից արագա-

բանությամբ, պետք է որ այս աղամտքուզ բառը ոչ միայն ավելի հին լինի. այլ և ժողովրդի մեջ սովորական դարձած բառ, որովհետև մաքուր բառը գոնե Կիլիկիայի հիշյալ երկու գավառներում սովորական է:

Աղամ անունից կազմված մի խումբ բառեր ունենք մեր ժողովրդի մեջ. այսպես՝ աղամաղող, աղամալույս, աղամամուր, աղամամքնիլ, աղամացավ, աղամաբուն, աղամորդի, աղամամերկ, որ և արագաբանությամբ ասվում է աղամերկ, Չկա աղամաքուզ, որ սակայն ըստ մեր տեսության նախապես դոյուքյուն ունեցած պիտի լինի, ապա անհետացած, որովհետև այդ պտուղը մեր երկրում չկա:

Արագաբանության այս ձևը անսովոր է կարծեմ. լավ կլիներ, եթե ուրիշ օրինակ էլ ճարվեր:

25. Տ Ա Ք

Այս բառի ծագումը բացատրելու համար զանազան մեկնություններ են տրված, որոնց ո՛չ մեկը ընդունելի չէ (տես Արմատ. Բռ., հա. 2. 849):

Ըստ իս շատ հասարակ բացատրություն ունի և զարմանալի է, որ ոչ ոք չի մտածել այդ, երանց հետ նաև ես, որ տալ դրել եմ առանձին արմատ:

Տալ բառը առաջացած է պարզապես տուալ բառի հոգնակի տալք մեկից՝ ալ բաղաձայնի սղմամբ: Սրա ճիշտ պատկերն է ներկայացնում շալ (ապա շանֆ), որ առաջանում է շալիք բառից սղմամբ:

Ուշ ժամանակի հայերենում մի խումբ բառերի հոգնակին գործածվում էր իբրև եզակի, անշուշտ նշանակության որոշ երանգով: Այս կարգից են շափ—շափի, կշիռ—կշիռֆ, ձև—ձևֆ, պտտնառ—պտտնառֆ ևն, Երրեքն էլ գործ է ածվում սրանց հոգնակի հայցականը. ինչ. շափսը վերցնել, շափ ու ձնս. ևն, Շիրակացին գրում է իր մի գիրքը «Բաղազս Կափուց և կշուց», որի ուղղականը պիտի լինի «շափք և կշիռք»:

-փֆ, -պֆ ձայնախմբի սղման շատ լավ օրինակ է քամք բառի հոգնակին՝ քամքֆ, որ բարբառներում (Սուչավա, Երևան, Ղարաբաղ, Վան են) դարձել է քամֆ, և այս ձևով գործածված է արդեն Առաք. պամ. 82:

Կարելի է հիշել նաև քափ պատյան թրի կամ զանակի, որի հոգնակի քափֆ ձևը տեղ-տեղ դարձել է քամֆ (տես Արմ. Բռ., հտ. Բ. էջ 1170):

Ըստ Հայկ. բառարանի տալ մեկ գործածությունը շատ հին է. ունենք օրինակ՝ տալ Խոր. Դ. 37, էլ. արիսա. էջ 137. տալացուցիչ Խոր. տալիլ «տաքանալ» Գիտ. տալուքյունն Ոսկ. յհ. ա. 21. տալումն Գիտ. էջ 464.—այս բոլորը հետին գրություններ են՝ հին բնագրերի մեջ մտցրած:

26. Ս Ա Ր Ը-Յ Ա Ր Ի Հ Ա Յ Ե Ր Ը

Սարը-Յարը Գոլսի թաղերից մեկն է, որ գտնվում է Վոսփորի ծայրին՝ Սև ծովի բերանի մոտ: Ունի բազմաթիվ սքանչելի աղբյուրներ, լեռնային հով կլիմա, որի համար էլ համարվում է Գոլսի ամառանոցներից լավագույնը: Բնակիչները մեծ մասամբ թուրք են. կան և շատ հույներ. հայերը շատ սակավաթիվ են:

Թեև իմ ծննդավայրը Գոլսի Սամաթիա թաղն է եղել, բայց 1890 Տեղեկագիր 1.—3

թվին փոխադրվել ու ապրել ենք Սարը-Յարում: Իմ հայ ընկերներից մեկը, բնիկ սարը-յարցի, որ սովորում էր տաճկական միջնակարգ դպրոցում, հայտնեց ինձ մի օր, թե Սարը-Յարի տաճիկները պատմում են, որ իրենք ծագումով հայ են: Բբբ թե եղել է մի հայ հոգևորական՝ Սարըյան անունով, որ ապրել է այդ թաղում, ապա նա թուրքացել է, իր հետ միասին մահմեդական դարձնելով ամբողջ թաղի հայությունը: Սարը-Յար թաղանունն էլ աղավաղված է Սարըյանի անունից: Այս պատմությունը հաստատելու համար՝ ասում էր, թե սարը-յարցի թուրքերի կալվածագրերում և այլ պաշտոնական գրությունց մեջ հաճախ գտնում ենք օր. կարապետ օղլու Ալի, Արթին օղլու Հասան են: Վերջապես ասում էր, թե այդ Սարըյան հոգևորականը մեռել ու թաղվել է նույն թաղի փոքր աղբյուրի կողքին:

[Սարը-Յար թաղի ներսում երկու աղբյուր կա: Մեծ աղբյուրը գտնվում է տաճկական մզկիթի դիմ և ունի մշտահոս հորդահոս երեք բերան, իսկ փոքր աղբյուրը գտնվում է նրանից մի քիչ վերև, պղնձահանքի բլրի տակ, փողոցի վրա: Այս աղբյուրի ճիշտ կողքին կա մի մետր բարձրությամբ կլոր սյունաձև տաճկական ձևով մի տապանաքար, որի վրա էլ կա արաբերեն արձանագրություն:]

Այն ժամանակ ես բավական արաբերեն չգիտեի՝ արձանագրությունը կարդալու համար: 1910 թվին, երբ ղնացի Պոլիս, աղբյուրն ու արձանագրությունը մնում էին անփոփոխ: Օրինակեցի և տալիս եմ այստեղ այդ արձանագրության պատճենը:

هوالمی الباقي مرحوم ومفقور
المحتاج الى رحمته ربه الففور

صاری باده صاری تار و حنه فاتحه ۸۵۷

Թարգմանություն

Նա է կենդանի և մնալուն. հանգուցեալ և ողորմածիկ կարօտ գթութեանն տեառն իւրոյ ողորմածի Սարի կրօնաւորն. վախճանեցաւ 857 թ.):

Ջարմանալի է որ վերջին տողի «կրօնաւորն» բառը. որ շատ էլ սովորական բառ է, երկու ուղղադրական սխալ ունի. գրված է *ارداد*, որ պիտի լինի *الردا*:

Զգիտեմ թե ինչպես պետք է հասկանալ 857 թվականը. եթե առնենք Հիջրեթի, ինչպես լինում է միշտ, պիտի համապատասխանի Քրիստոսի 1452 թվին: Բայց այդ ռւր կտանի մեղ, Պոլսի գրավման նախորդ տարին է: Ես թվականը սխալ արտադրած չեմ և չեմ էլ կարծում, որ փորագրիչը սխալ գրած լինի թվականը: Արդյոք Հիջրեթից տարբեր մի թվական է. այդ մասին թող արտահայտվեն ավելի գիտակ անձինք:

Ստուգելու համար, թե արդյոք Սարը-Յարի հայոց մասին որևէ հին հիշատակություն կա, բացի Երեմիա Չելեպիի «Պատմութիւն Ստամպուլոյ» աշխատությունը, որ հրատարակված է Վիեննա 1913 և ներկայացնում է Պոլսի բոլոր թաղերի համառոտ նկարագրությունը, ծանրանալով հատկա-

պես հայոց վրա՝ Այստեղ, էջ 90, ահա թե ինչ կարդացի Սարը-Յարի մասին.

Սարըեառն ե ի կարգին՝

Մի յիշեր որ սիրտս է դողման:

Այս երկտողից անմիջապես երևաց, որ Երեմիան 1684 թվին գրելով այս բառերը, ուզում է ակնարկել մի ծանր արկած, որ տեղի է ունեցել այդ թվից ոչ շատ առաջ: Արկածը անշուշտ այն դեպքն է, որ պատմեցինք քիչ առաջ:

Երեմիա Չելեպիի Պատմության հրատարակիչը՝ Դր. Վ. Թորգոմյան հատորներով ծանոթություններ ունի նույն գրքի մասին: Այս շարքում, հտ. Բ. Վիեննա, 1932, էջ 711—2 խոսում է նեց Չելեպիի այս երկտողի մասին, և քաղելով Ինճիճյանի Ամարանոց Բիւղանդեան (Վենետիկ, 1794, էջ 176) և Սարգիս Դսրի մի անտիպ աշխատությունից, տալիս է հետևյալ համառոտ տեղեկությունը.

«Սարը-Յարը հնում հայաբնակ գյուղ է եղել. հայերը ունեցել են Ս. Հակոբ անունով մի եկեղեցի. «Բայց չար արկածը նրանց մասնագական կրոնին է դարձրել»:

Այդ չար արկածը «Սարըյան» հայ կրոնավորի դարձի դեպքն է, որ մենք ու պատմեցինք:

Իմ հիշատակած աղբյուրի և «Սարի կրոնավորի» տապանաքարի անմիջապես կողքին բացվում է մի նեղլիկ փողոց, ուր կա մի տաճկա՛ն թեքկն: Արդյոք այս թեքկեն էլ հայոց վերահիշյալ Ս. Հակոբ եկեղեցին: